ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ

2013-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

# ՔԱՌԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Կազմել է՝ համայնքի ղեկավար Գ. Սահակյան

Հաստատվել է համայնքի ավագանու 20.02.2013թ. թիվ 8-Ն որոշմամբ
(նիստի ամսաթիվը)

Սպիտակ 2013թ.

(համայնքի անվանումը)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ……………………………………3

1.1.ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ……………………………………..3

1.2. ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ……………………………………………………………………………………...5

2.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ԵՆԹԱԿԱ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.......5

Համայնքի ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների անվանումները և հաստիքների թիվը…7

Նախադպրոցական կրթություն……………………………………………………………………….8

Երաժշտական և գեղարվեստի դպրոցներ……………………………………………………………8

Գրադարան……………………………………………………………………………………………9

Մշակույթի տուն…………………………………………………………………………………10

Թանգարան……………………………………………………………………………………………10

Սպիտակի մանկապատանեկան մարզադպրոց ……………………………………………….11

<<Սպիտակի բնակարանների սպասարկման գրասենյակ>> ՀՈԱԿ ………………………………...11

3. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԵՎ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ…………………………………………………………………………………………12

4. ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐ………………………………………………………………………...13

5.ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ………………………………………………………………………………14

ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ԵՎ ՀԱՄՅԵԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարպետաց քաղաքի համալիր ծրագրի իրականացում…………………………………………....14

Երկրաշարժի հետևանքով անհատական բնակելի տուն կորցրած Սպիտակ քաղաքի բնակիչներին բնակարանով ապահովելու ծրագրի մասին…………………………………………15

6. ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՈԼՈՐՏ………………………………………………16

Սպիտակ քաղաքի ջրամատակարարում և ջրահեռացում……………………………………......16

Էներգամատակարարում…………………………………………………………………………..17

Արտաքին լուսավորություն ………………………………………………………………………17

Աղբահանություն և սանիտարական մաքրում……………………………………………………25

7. ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ…………………………………………………..19

8. ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ………………………………………………………………………………………….19

9. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ……………………………………………………………………………….19

10. ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ………………………………………………..19

11.ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ……………………………………………………………………………..20

12.ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐ, ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐ, ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ, ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ………..20

13. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ……………………………………………………………………………………21

14. ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ…………22

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼ ԾՐԱԳՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ…………………………………………………..29

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

## 1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

### *1.1. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ*

Սպիտակը գտնվում է Վանաձոր-Գյումրի և Վանաձոր-Երևան ավտոմոբիլային մայրուղիների խաչմերուկում, Փամբակի հովտում, Փամբակ գետի և դրա վտակ Ջրաշենի ափերին, ծովի մակերևույթից 1250մ բարձրության վրա: Հեռավորությունը մարզկենտրոնից 19 կմ է, իսկ մայրաքաղաքից՝ 97 կմ:

Քաղաքի վարչական տարածքը 6066.75 հա է:

Սպիտակի տարածքը լեռնային է. հյուսիսում ձգվում են Բազումի, իսկ հարավում՝ Փամբակի լեռնաշղթաները: Ռելիեֆն ունի էրոզիոն-դենուդացիոն կառուցվածք: Տարածքի երկրաբանական կառուցվածքը բարդ է, ձևավորված է նստվածքային հրաբխածին, ներժայթքային ապարներից՝ կրաքարեր, տուֆածին ապարներ, բազալտ ու ավազաքարեր: Երկրաշարժաբանական առումով տարածքը համարվում է սեյսմիկ ակտիվ գոտի՝ աղետաբեր երկրաշարժի բարձր հավանականությամբ (9 և ավելի բալ):

Մայրուղիների երկարությունը 52.8 կմ է:

Սպիտակի տարածքով անցնում է Թբիլիսի-Վանաձոր-Սպիտակ-Մասիս երկաթգիծը:

Սպիտակ համայնքի տարածքը գտնվում բարեխառն կլիմայական գոտում: Ձմեռը մեղմ է, ամառը՝ չափավոր տաք: Ամենացածր ամսեկան միջին ջերմաստիճանը հունվարին է՝ -4.7$^0$ C, ամենատաք ամիսը հուլիսն է՝ +18$^0$ C ամսեկան միջին ջերմաստիճանով: Միջին հաշվով 0$^0$C-ից բարձր ջերմաստիճանով օրերի թիվը Սպիտակ քաղաքում կազմում է 270 օր: Տարեկան տեղումների միջին մակարդակը 439մմ է:

Սպիտակի տարածքը եղել է հին բնակատեղի, որի պատմությունը սկսվում է դեռևս մ.թ.ա. IV-I հազարամյակներից: Սպիակում, համանուն նախկին շրջանի Մեծ Պարնի, Ջրաշեն, Գոգարան, Արևաշող գյուղերում հայտնաբերված նեոլիթյան գործիքներն ու կենցաղային իրերը՝ քարե հատիչները, կացինները, դանակները, նետասլաքները, աղորիքները, արձանիկները և գտնված մյուս առարկաները վկայում են այդ ցեղերի հասարակական բարձր աստիճանը:

Սպիտակում՝ Սարդարի կոնդ բլուրում հայտնաբերվել են բրոնզե դարաշրջանի (ք.ա. 3-2-րդ հազարամյակում) բնորոշ առարկաներ՝ պղնձե և բրոնզե նետասլաքներ, դաշույններ, սև փայլեցրած կավախեցե ամաններ և այլ առարկաներ: Տարածքի բնակիչների կյանքը վերընթաց զարգացում է ապրել նաև ք.ա. 1-ին հազարամյակում, երբ այդ տարածքը մտել է Ուրարտու պետության կազմի մեջ (ք.ա. 7-րդ դար):

Երվանդունիների (ք.ա. 4-2-րդ դարեր) և Արտաշեսյանների (ք.ա. 2-1-ին դարեր) թագավորության ժամանակ նաև Սպիտակի այժմյան տարածքը եղել է Հայաստանի, ավելի ուշ՝ Մեծ Հայքի Գուգարք նահանգի Տաշիր գավառի կազմում: 9-րդ դարավերջին մտել է Բագրատունյաց թագավորության, 972-1118թթ.-ը՝ Կյուրիկյան թագավորության, իսկ 12-րդ դարավերջից՝ Սելջուկյան թուրքերից ազատագրված հայկական հողերի հետ՝ Զաքարյանների իշխատապետության մեջ:

14-18-րդ դարերում Արևելյան Հայաստանի հյուսիս-արևելյան մի քանի գավառակների հետ միացվել է Ռուսաստանին, տարածքը կոչվել է Համամլուի գավառակ և մտել նախ Լոռի-Փամբակի, ապա Ալեքսանդրապոլի գավառի մեջ:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ քաղաքը մինչև 1949թ. կոչվել է <<Համամլու>> կամ <<Համամլի>>, որը հավանաբար առաջացել է պարսկերեն <<համամ>> (բաղնիք) բառից: Համամլուի նոր անունը՝ Սպիտակ, կապված է քաղաքի շրջակայքում եղած կրաքարերի հանքերի հետ:

Համամլուի շրջանը, որպես վարչական միավոր ստեղծվել է 1937թ.-ի դեկտեմբերի 31-ին: Սպիտակը 1960թ.-ին ստացել է քաղաքի, 1971թ.-ին՝ հանրապետության ենթակայության քաղաքի կարգավիճակ:

Համամլիում դեռևս 19-րդ դարի կեսերից գործել են ծխական դպրոցներ: Նախասովետական Համամլուն, բացի մի քանի դարբնոցից, ջրաղացներից ու ձիթահանքից, արդյունաբերական ոչ մի ձեռնարկություն չուներ: Բնակիչները հիմնականում զբաղվում էին երկրագործությամբ ու անասնապահությամբ: Բնակավայրի արտադրական առաջին ձեռնարկությունը՝ պանրի գործարանը, կառուցվել է 1937թ.-ին: 1947թ. առաջին արտադրանքն է տվել շաքարի գործարանը, որը արտադրական յուրաքանչյուր սեզոնում վերամշակում էր 130 հազար տոննա շաքարի ճակնդեղ, արտադրում 14 հազար տոննա բարձրորակ շաքարավազ: Հետագայում կոմբինատի կարգավիճակ ստացած ձեռնարկության մեջ ներառված կիտրոնաթթվի արտադրամասի թանկարժեք արտադրանքն առաքվում էր ոչ միայն Խորհրդային Միության հանրապետություններ, այլև արտասահմանյան մի շարք երկրներ: Արտասահմանյան 21 երկիր (Ռումինիա, Իրաք, Վիետնամ, Մոնղոլիա, Թուրքիա, Կուբա, Մալի և այլն) և սովետմիության մի շարք խոշոր քաղաքներ էին արտահանվում <<Հայվերելակմեքենա>> միավորման մարդատար և բեռնատար վերելակներ: Այստեղ աշխատող բանվոր ծառայողների թիվը հասնում էր 700-ի: Գործում էր Հացամթերքի կոմբինատը, կարի արտադրական միավորումը, տրիկոտաժի, կոշիկի ֆաբրիկաները, ռետինատեխնիկական իրերի, հացի գործարանները: Մինչև 1988թ.-ի դեկտեմբերի 7-ի աղետալի երկրաշարժը Սպիտակը արդյունաբերական և գյուղատնտեսական զարգացած քաղաքներից էր, որտեղ գործում էր 14 արդյունաբերական ձեռնարկություն: Ուներ 7 հանրակրթական, գեղարվեստի, երաժշտական, մարզական դպրոցներ, տեխնիկում, պրոֆտեխուսումնարան, 10 մսուր-մանկապարտեզ, հիվանդանոց, զբոսայգի, մշակույթի տուն, գրադարան, կինոթատրոն, թանգարան, մարզադաշտ, կապի հանգույց, տպարան:

1988 թվականը ճակատագրական եղավ Սպիտակի կյանքում: Դեկտեմբերի 7-ին, ահեղ երկրաշարժի հետևանքով, վայրկյանների ընթացքում երբեմնի արդյունաբերական քաղաքը վերածվեց փլատակների, զոհվեց ավելի քան 4000 մարդ:

Սպիտակցին երախտագիտությամբ է հիշում բարի կամքի բոլոր երկրներին ու ժողովուրդներին, սփյուռքի մեր հայրենակիցներին, անհատ մարդկանց ու կազմակերպություններին, ովքեր իրենց անգնահատելի օգնությունն ու աջակցությունը բերեցին երկրաշարժի հետևանքների վերացման, ավերված քաղաքի վերականգնման գործին:

Բարեկամ ժողովուրդների օգնությամբ վեր հառնած Սպիտակն այսօրվա իր տեսքով, թաղամասերի անվանումներով ժողովուրդների բարեկամության իրական խորհրդանիշ է:

Չնայած նրան, որ Սպիտակում վերականգնողական մեծ աշխատանքներ են տարվել (վերականգնվել ու գործում են բոլոր հանրակրթական, երաժշտական, գեղարվեստի և մարզական դպրոցները, բուժհաստատությունները, սպասարկման ոլորտի շատ կազմակերպություններ, վերականգնվել է բնակֆոնդի մի մասը), սակայն մինչև օրս վերացված չեն սարսափելի աղետի հետևանքները, դեռևս ամբողջովին լուծված չէ անօթևան բնակիչներին բնակարանով ապահովման խնդիրը, կան չլուծված սոցիալ-տնտեսական բազում խնդիրներ՝ փողոցների բարեկարգում և լուսավորություն, ոռոգման, խմելու ջրի ջրագծերի կառուցում և վերկանգնում: Սպիտակում խիստ կարևորվում է աշխատատեղերի ստեղծման խնդիրը:

## *1.2. ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ*

Համայնքի բնակչության թիվը և սոցիալական կազմը

Բնակչության թիվը 01.01. 2013թ դրությամբ – 16243 մարդ, այդ թվում `

- կանայք – 8171
- տղամարդիկ- 8072
- բնակչության տարիքային կազմը (0-5, 6-17, 18-65, 65-ից բարձր տարեկան)
  0-5 – 789
  6-17- 2473
  18-65 – 11706
  65-ից բարձր - 1275
- թոշակառուներ – 2815
- միակողմանի ծնողազուրկ երեխաներ – 144
- երկկողմանի ծնողազուրկ երախաներ – 7
- հայրենական պատերազմի մասնակիցներ – 13
- հաշմանդամներ - 1394
- գործազուրկներ - 678
- ընտանիքների (ծխերի) թիվը- 4561
- նպաստառուներ- 1788
- Անօթևան ընտանիքներ – 867

Բնակչության իրավիճակի բնութագրիչներ

| Հ/հ | Բնութագրիչներ | 01.01.2010թ. դրությամբ | 01.01.2011թ. դրությամբ | 01.01.2012թ. դրությամբ | 01.01.2013թ. դրությամբ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Բնակչությունը | 16.852 | 16.883 | 16.051 | 16.243 |
| 2 | Ծնվածներ | 168 | 207 | 176 | 184 |
| 3 | Մահացածներ | 121 | 113 | 133 | 103 |
| 4 | Ամուսնություններ | 77 | 49 | 55 | 68 |
| 5 | Ամուսնալուծություններ | 86 | 66 | 50 | 47 |

Աղբյուրը` ՔԿԱԳ Սպիտակի տարածքային բաժին

## *2.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ԵՆԹԱԿԱ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

Տեղական ինքնակառավարման մարմիններն են`

1. համայնքի ավագանին` բաղկացած՝15 անդամից:
2. Համայնքի ղեկավարը, որն իր լիազորություններն իրականացնում է քաղաքապետարանի աշխատակազմի միջոցով:

Համայնքի ղեկավարի աշխատակազմի հաստիքների թիվը 52 է, որից 35-ը համայնքային ծառայողներ են, 5-ը հայեցողական պաշտոն զբաղեցնողներ, 1–ը քաղաքացիական աշխատանք կատարող (ցանցային ադմինիստրատոր), 10-ը սպասարկող անձնակազմ:

Քաղաքապետարանի աշխատակազմը բաղկացած է 5 կառուցվածքային և 1 առանձնացված ստորաբաժանումներից:

## ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Կառուցվածքային ստորաբաժանումներ

1. Քարտուղարության բաժին
2. Ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժին
3. Քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժին
4. Սոցիալական, մշակույթի, երիտասարդության, սպորտի և լրատվության բաժին
5. Ներքին աուդիտի բաժին

**Առանձնացված ստորաբաժանում**

1. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Սպիտակի տարածքային բաժին

## Համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքը



*Համայնքի ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների անվանումները և հաստիքների թիվը*

- <<Սպիտակի թիվ 1 ՆՈՒՀ>> ՀՈԱԿ -12
- <<Սպիտակի թիվ 2 ՆՈՒՀ>> ՀՈԱԿ -30
- <<Սպիտակի երաժշտական դպրոց կրթադաստիրակչական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ – 29
- <<Սպիտակի գեղարվեստի դպրոց կրթադաստիրակչական ուսումնական հաստատություն >> ՀՈԱԿ – 9
- <<Սպիտակի քաղաքային գրադարան>> ՀՈԱԿ- 15
- <<Սպիտակի մշակույթի տուն>> ՀՈԱԿ -14
- <<Սպիտակի քաղաքային զբոսայգի>> - 7
- <<Սպիտակի թանգարան>> ՀՈԱԿ – 4
- <<Սպիտակի թիվ 1 մանկապատանեկան մարզադպրոց>> ՀՈԱԿ – 18
- <<Սպիտակի ԲՍԳ>> ՀՈԱԿ – 15

*Նախատեսվող ծրագրային միջոցառումներ*

- Կարևորել տեղական ինքնակառավարման մարմնի դերը՝ որպես վարչական մարմնի:
- Պահպանել քաղաքացիների և իրավաբանական անձանց՝ օրենքով սահմանված իրավունքները վարչական մարմնի հետ իրավահարաբերություններում:
- Վարչարարությունը իրականացնել օրենքով ամրագրված վարչարարության սկզբունքներին համահունչ, սահմանված կարգով և ժամկետներում՝ ընդունելով իրավաչափ վարչական ակտեր:
- ՏԻՄ օրենքում կատարված փոփոխության համաձայն, սահմաված կարգով, ստեղծել աշխատակազմ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող համայնքային կառավարչական հիմնարկ, մշակել ու հաստատել հիմնարկի կանոնադրությունը, և ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավաբանական անձանց գրանցում իրականացնող մարմնի կողմից հիմնարկի հաշվառման գործընթացը:
- Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի զարգացման միջոցով բարձրացնել ծառայությունների որակը, համայնքի բյուջեի և սեփականության առավել արդյունավետ կառավարումը, քաղաքացիների կողմից ՏԻՄ մարմինների գործունեության վերահսկողությունը:
- Կատարելագործել համայնքի պաշտոնական կայքը, ապահովել համայնքում կատարված աշխատանքների մասին իրազեկումը լայն հասարակությանը:
- Ամրապնդել սերտ համագործակցությունը պետական և տարածքային կառավարման, գործադիր մարմնի տարածքային ծառայությունների, զանգվածային լրատվական միջոցների հետ:

## Նախադպրոցական կրթություն

Համայնքի ենթակայությամբ գործում է 2 նախադպրոցական ուսումնական հաստատություն, որտեղ հաճախում են 220 երեխաներ:

Թիվ 2 ՆՈՒՀ- ը հիմնովին վերանորոգվել է: Կրկնակի ավելացել է քաղաքապետարանի կողմից երեխաներին հատկացվող սննդի գումարները, համալրվել է ննջարանների, խաղասենյակների և խոհանոցի գույքը: Ձեռք է բերվել կենցաղային տեխնիկա՝ հեռուստացույց, երաժշտական կենտրոն, դաշնամուր, DVD և այլն:

| Հ/հ | Նախադպրոցական ուսումնական հաստատություններ | Խմբերի քանակը | Երեխաների թիվը | | Դաստիարակների թիվը | Օժանդակ աշխատողների թիվը | Հասցե | Շենքային պայմաններ | Շենքի պատկանելությունը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Փաստացի | նախագծային | | | | | |
| 1 | <<Սպիտակի թիվ 1 ՆՈՒՀ>> ՀՈԱԿ | 2 | 50 | 40 | 5 | 6 | ք. Սպիտակ Ուզբեկական թաղ. | վարձակալական | Թիվ 8 միջն. դպրոց |
| 2 | <<Սպիտակի թիվ 2ՆՈՒՀ >> ՀՈԱԿ | 7 | 200 | 160 | 15 | 14 | ք. Սպիտակ Շահումյան 10 | շինություն | համայնքային |
| | *Ընդամենը* | 9 | 250 | 200 | 23 | 23 | | | |

*Հիմնախնդիրներ և նախատեսվող ծրագրային միջոցառումներ*

- Մինչև 2015թ. 5 տարեկան բոլոր երեխաներին նախադպրոցական կրթության ծրագրում պրտադիր ներառում:
- Նոր քաղաքի տարածքում թիվ 1 ՆՈՒՀ-ի համար վարձակալական տարածքների ընդլայնում, բարելավում:
- Տնօրենների և դաստիարակների մասնագիտական կրթության համապատասխանության ստուգում, ատեստավորումների անցկացման անհրաժեշտություն և աշխատանքի ընդունման համար մրցույթների կազմակերպում:
- Դաստիարակչական գործընթացներում արդիական մեթոդների կիրառում՝երեխայի ֆիզիկական, բարոյական, մտավոր զարգացման հիմքերի ստեղծման, մայրենի լեզվով հաղորդակցվելու և այդ հիմքի վրա օտար լեզուների ուսումնասիրման նախադրյալների ապահովման ուղղությամբ:
- սննդի մատակարարման կանոնակարգում, կենտրոնացում և անվտանգության խնդիրների վերահսկում:
- Տեխնիկական միջոցներով ապահովում:
- ՆՈՒՀ-երի աշխատողների վերապատրաստում:
- Երեխաների խնամքին ուղղված ծառայությունների որակի բարելավում:
- ՆՈՒՀ-երի կառավարման համակարգի բարելավում:

## Երաժշտական և գեղարվեստի դպրոցներ

Սպիտակի քաղաքապետարանի ենթակայությամբ են գործում համայնքի երաժշտական և գեղարվեստի դպրոցները, որտեղ հաճախում են համապատասխանաբար 148 և 42 երեխաներ և ներգրավված են շուրջ 40 աշխատողներ:

Դպրոցները տեղավորված են լուսավոր և հարմարավետ շենքերում, ուսուցիչները ունեն համապատասխան մասնագիտական կրթություն:

| Հ/հ | Դպրոցի անվանումը | Օբյեկտի նախագծային հզորությունը /քմ/ | Աշակերտների թիվը | | Ուսուցիչների թիվը | օժանդակ աշխա-տողների թիվը | Հասցե | Շենքային պայմաններ | Շենքի պատկանել-ությունը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Փաստացի | Նախագծային | | | | | |
| 1. | <<Սպիտակի երաժշտական դպրոց կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ | 593 մ² | 148 | 200 | 22 | 6 | ք. Սպիտակ, Շահումյան 105 | Հիմնական տիպային կառույց | ՀՀ |
| 2. | <<Սպիտակի գեղարվեստի դպրոց կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ | 545,50 մ² | 40 | 100 | 5 | 3 | ք. Սպիտակ, Շահումյան | Հիմնական տիպային կառույց | ՀՀ |

Կրթօջախները իրականացնում են արտադպրոցական գեղագիտական դաստիարակություն: Դպրոցների սաները իրենց ոլորտներից մշտապես մասնակցում են մարզային, հանրապետական և միջազգային մրցույթների, ցուցահանդեսների և հաճախակի արժանանում դիպլոմների ու պատվոգրերի:

*Հիմնախնդիրներ և նախատեսվող ծրագրային միջոցառումներ*

- Դպրոցները գույքով նկարչական և երաժշտական գործիքներով ապահովելը:
- Շենքերի ընթացիկ նորոգում:
- Գեղարվեստի դպրոցի շենքի գույքային իրավունքի հաստատում:

## Գրադարան

Սպիտակի քաղաքային գրադարանը գործում է մշակույթի տան շենքում՝ հարմարեցված պայմաններում, ունի շուրջ 27000 կտոր գրքային ֆոնդ, ընթերցողների թիվը 4000 է:

Վերջին տարիներին զգալիորեն ավելացել են թերթերին և ամսագրերին հատկացվող գումարների չափը, պարբերականների տեսականին: Գրադարանը ապահոված է ինտերնետ կապով:

| Հ/հ | Գրադարանի անվանումը | Օբյեկտի նախագծ. հզորությունը /քմ/ | Ընթերցողների թիվը | Աշխատողների թիվը | Հասցե | Շենքային պայմաններ | Շենքի պատկանելությունը/կամ կառույցի/ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | <<Սպիտակի քաղաքային գրադարան>> ՀՈԱԿ | 335 | 2758 | 13 | Ք.Սպիտակ Ա.Ավետիսյան 1 | Հարմարեցված քարաշեն, | ՀՀ կառավարություն |
| 2 | Թիվ 2 գրադարան-մասնաճյուղ | 50 | 1031 | 2 | Ք.Սպիտակ, Իտալական թաղ. տնակ | Ժամանակավոր շինություն | Սպիտակի քաղաքապետարան |
| | Ընդամենը | 385 | 3784 | 15 | | | |

*Հիմնախնդիրներ և նախատեսվող ծրագրային միջոցառումներ*

- ժամանակակից ընթերցողական գրականության համալրում:
- ջեռուցման համակարգերի կառուցում:
- ցուցասրահում և ֆոնդապահոցներում կայուն ջերմաստիճանի ապահովում:

## Մշակույթի տուն

Մշակույթի տանը գործում է 7 ինքնագործ խումբ, որոնցում ընդգրկված են շուրջ 150 սաներ: Մշակույթի տան գործունեությունը նպատակաուղղված է շնորհալի երեխաների և նրանց տաղանդի հայտնաբերմանը:

Մշակույթի տան պարային խմբերը, երգի և տիկնիկային ստուդիայի սաները մշտապես մասնակցում են մարզային և հանրապետական մրցույթների ու փառատոների և հաճախակի վերադառնում մրցանակներով, դիպլոմներով ու շնորհակալագրերով:

| Հ/հ | Անվանումը | Օբյեկտի նախագծ. հզորությունը /մարդ/ | | Օբյեկտի նախագծ. հզորությունը /քմ/ | Աշխատողների թիվը | Հասցե | Շենքային պայմաններ | Շենքի պատկանելությունը /կամ կառույցի/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Դահլիճի նստատեղ | մարդ | | | | | |
| 1 | <<Սպիտակի մշակույթի տուն>> ՀՈԱԿ | 391 | 391 | 2527X25 քմ | 14 | Ք.Սպիտակ Ա.Ավետիսյան 1 | քարաշեն | ՀՀ կառավարություն |

*Հիմնախնդիրներ և նախատեսվող ծրագրային միջոցառումներ*

- Մշակույթի տան ջեռուցման համակարգի հարցի կարգավորում:
- Մշակույթի տան մասնակի վերանորոգում:
- Պետական և մշակութային հիշարժան տարեթվերին, տոներին և հիշատակի օրերին նվիրված միջոցառումների և հուշ-երեկոների կազմակերպում:
- Մշակույթի տան թատերական խմբի և համույթների ստեղծում:
- Բարձր մասնագիտական որակավորում ունեցող մասնագետների ներգրավում:
- Մշակույթի տան շենքի գույքային իրավունքների հաստատում:

## Թանգարան

Մշակույթի տան առաջին հարկում է գործում նաև <<Սպիտակի թանգարանը>>, որտեղ գործում են չորս բաժիններ՝

. հնագիտական
. փառքի
. կերպարվեստի

. 1988 Սպիտակյան երկրաշարժի

*Հիմնախնդիրներ և նախատեսվող ծրագրային միջոցառումներ*

- թանգարանային նմուշների անվտանգության ապահովում:
- ցուցասրահում կայուն ջերմաստիճանի ապահովում:
- մշտական ցուցադրությունների և թեմատիկ միջոցառումների կազմակերպում:

## Սպիտակի մանկապատանեկան մարզադպրոց

Սպիտակի մանկապատանեկան մարզադպրոցում գործում են ֆուտբոլի, <<ազատ ոճ>> ըմբշամարտի, <<սամբո>> ըմբշամարտի, բասկետբոլի, շախմատի, սեղանի թենիսի և բռնցքամարտի խմբակներ: Մարզադպրոցի սաները առավել մեծ հաջողությունների են հասել վերջին տարիների ընթացքում:

2011-2012թթ. Աշխարհի ու Եվրոպայի երիտասարդական և մեծահասակների առաջնություններում մարզադպրոցի <<սամբո>> ըմբշամարտիկները նվաճել են 2 արծաթե և 6 բրոնզե մեդալներ:

| Հ/հ | Անվանումը | Օբյեկտի նախագծային հզորությունը (մ2) | Մարզիկների թիվը | | Մարզիչների թիվը | Օժանդակ աշխատողների թիվը | Հասցե | Շենքային պայմաններ | Շենքի պատկանելությունը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Փաստացի | Նախագծային | | | | | |
| 1 | <<Սպիտակի թիվ 1 մանկապատանեկան մարզադպրոց>> ՀՈԱԿ | 1026 | 167 | 140 | 8 | 10 | ք. Սպիտակ, փ. Այգեստան | Տիպային | ՀՀ |
| 2 | Կաթսայատուն | 16 | | | | | ք. Սպիտակ, փ. Այգեստան | | ՀՀ |

| Հ/հ | Մարզաձևերը/ խմբերը | Մարզիկների թիվը | Մարզիչների թիվը |
|---|---|---|---|
| 1 | Ազատ ոճի ըմբշամարտ | 40 | 2 |
| 2 | Ֆուտբոլ | 35 | 1 |
| 3 | Սամբո | 18 | 1 |
| 4 | Բասկետբոլ | 20 | 1 |
| 5 | Շախմատ | 24 | 1 |
| 6 | Սեղանի թենիս | 10 | 1 |
| 7 | Բռնցքամարտ | 20 | 1 |

## <<Սպիտակի բնակարանների սպասարկման գրասենյակ>> ՀՈԱԿ

*Հիմնախնդիրներ և նախատեսվող ծրագրային միջոցառումներ*

- Բնակելի ֆոնդի պահպանման, շահագործման, նորոգման և սպասարկման աշխատանքների կազմակեպում ու իրականացում:

- Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների, գույքահարկի և հողի հարկի գումարների, աղբահանության, ինչպես նաև համայնքի բյուջե մուտքագրվող այլ գումարների հավաքագրում:
- Քաղաքացիների հաշվառման աշխատանքների կազմակերպում:
- Թաղամասերի զարգացմանն ուղղված ընթացիկ և հեռանկարային ծրագրերի մշակում:

### *3.ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ. ԵՎ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ*

*Սպիտակի առողջապահական հաստատության վերաբերյալ տվյալներ*

| Հ/Հ | ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ | ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐԻ ԹԻՎԸ | ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹԻՎԸ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ՀԱՃԱԽՈՒՄ | ԲԺԻՇԿ | ԲՈՒԺՔՈՒՅՐ | ՕԺԱՆԴԱԿ | ԸՆԴԱՄԵՆԸ |
| 1 | <<Սպիտակի բժշկական կենտրոն>> ՓԲԸ | Մարզային | 60<br>300 հաճախում հերթափոխում | 58 | 100 | 49 | 207 |
| 2 | <<Ռեցեպտոր>> առողջապահական կենտրոն | | — | 5 | 2 | 2 | 9 |
| 3 | <<Հույս Հայաստան հիմնադրամ>> բժշկական կենտրոն | | — | 4 | 3 | 2 | 9 |
| 4 | Հիգիենիկ համաճարակային կենտրոն | Մարզային | — | 3 | — | — | 3 |
| 5 | Հիգիենիկ հակահամաճարակային կենտրոն | Մարզային | — | 1 | 12 | 4 | 17 |

*Սպիտակի հանրակրթական դպրոցների վերաբերյալ տվյալներ*

| Ուս. տարի | ԴՊՐՈՑՆԵՐ | | | | | | | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | I | II | III | IV | V | VI | VIII | Թիվ 1 հատուկ | |
| 2012-2013 | 320 | 213 | 436 | 179 | 69 | 129 | 231 | 136 | 1813 |
| 2011-2012 | 390 | 336 | 449 | 213 | 74 | 158 | 223 | 146 | 1989 |
| 2010-2011 | 392 | 338 | 425 | 219 | 78 | 153 | 210 | 180 | 1995 |
| 2009-2010 | 405 | 377 | 437 | 247 | 82 | 178 | 205 | 234 | 2165 |

| Ուստարին | Դպրոցների թիվը | Ուսուցիչների թիվը | Ուսումնաօժանդակ աշխ. թիվը | Աշակերտների թիվը |
|---|---|---|---|---|
| 2012-2013 | 8 | 270 | 91 | 1813 |
| 2011-2012 | 8 | 271 | 90 | 1989 |
| 2010-2011 | 8 | 274 | 89 | 1995 |
| 2009-2010 | 8 | 279 | 84 | 2165 |

*Նախադպրոցական ուսումնական հաստատության վերաբերյալ տվյալներ*

| Հ/հ | Նախադպրոցական ուսումնական հաստատություններ | Խմբերի քանակը | Երեխաների թիվը | | Դաստիարակների թիվը | Օժանդակ աշխատողների թիվը | Հասցե | Շենքային պայմաններ | Շենքի պատկանելությունը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Փաստացի | նախագծային | | | | | |
| 1 | ԵՄՔԱ | 2 | 23 | 32 | 3 | 3 | Այգեստան 4ա | Քարի շենք | Սպիտակի ԵՄՔԱ ՀԿ |

## 4. ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐ

Սպիտակ համայնքում գտնվում են 26 պատմաճարտարապետական և հնագիտական հուշարձաններ, որոնցից 18 ընդգրկված են ՀՀ մշակույթի նախարարության պատմամշակութային հուշարձանների պահպանության ցանկում, 4-ը քարտեզագրված են, իսկ 8 հուշարձաններ, որոնք կառուցվել և տեղադրվել են 1990-2012 թվականներին, ընդգրկված չեն ՀՀ մշակույթի նախարարության պատմամշակութային հուշարձանների պահպանության ցանկում:

*Հիմնախնդիրներ և նախատեսվող ծրագրային միջոցառումներ*

- բոլոր հուշարձանների քարտեզագրում իրենց պահպանման գոտիներով:
- քաղաքի կենտրոնը Սովխոզային թաղամասին կապող կամուրջ-հուշարձանի վերանորոգում:
- Սպիտակ համայնքի պատմությանը, մշակութային և սոցիալ-տնտեսական զարգացմանը վերաբերող տեղեկատվության ներկայացում:

## 5.ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

### ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հիմնախնդիրը և նախատեսվող ծրագրային միջոցառումներ*

- Համայնքում ներկայումս քաղաքաշինական գործունեությունը իրականացվում է առանց հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի և քաղաքի տարածական համաչափ զարգացումը ապահովելու համար խիստ անհրաժեշտություն է քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի՝ համայնքի գլխավոր հատակագծի և գոտևորման նախագծի մշակումը և հաստատումը:
- ՀՀ կառավարության սահմանած կարգով քաղաքի գլխավոր հատակագծի, և գոտևորման նախագծի մշակում և հաստատում մինչև 2016թ. հունվարի 1-ը:
- Համայնքային և պետական կառույցների հետ համագործակցությամբ նոր հասցեավորման անցկացում:

*Վարպետաց քաղաքի համալիր ծրագրի իրականացում*

Հաշվի առնելով Հայաստանի Ազգային Մրցունակության հիմնադրամի կողմից մշակված <<Վարպետաց քաղաքի>> կառուցման ծրագրային դրույթները (կցվում է) 2009թ Սպիտակի նոր քաղաքի տարածքում պետական աջակցությամբ իրականացվեց 220 երկու և երեք սենյականոց անհատական բնակելի տների կառուցման ծրագիր: Ծրագիրն ընթացքի մեջ է, կառուցվելու է նաև մոտավորապես 80 մեկ սենյականոց բնակարան: Քաղաքի այդ հատվածը անվանվեց <<Վարպետաց>> թաղամաս: Տարածքը ՀՀ Կառավարության 10.05.2012թ. թիվ 95 որոշմամբ առանձնացվել է քաղաքաշինության հատուկ կարգավորման օբյեկտի տարածք:

Հայկական ավանդական արհեստները վերականգնելու և զբոսաշրջության զարգացմանը նպաստելու համար Սպիտակ քաղաքի <<Վարպետաց>> թաղամասի կենտրոնական հատվածում նախատեսվել է պետական աջակցությամբ իրականացնել 32 բնակարան-արհեստանոցների կառուցում: Տները և արհեստանոցները կհիմնվեն յուրաքանչյուրը 100քմ տարածքի վրա, որից 50քմ կտրամադրվի առջևի բակի համար, որը կծառայի նաև ամառային արհեստանոց, չորանոց, պահեստ և 50քմ բնակելի մաս: Տները կլինեն 2 հարկանի, արհեստանոցները՝ 1:

Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա

- որպեսզի արհեստավորները ապրեն և աշխատեն հարմարավետ պայմաններում և ստեղծեն արհեստի գործեր, որոնք կվաճառվեն տեղացի և արտասահմանի հյուրերին
- հիմնել արհեստավորների դպրոց, որը կօգնի ավանդական գիտելիքներ փոխանցել նոր սերնդին
- հիմք դնել նոր ներդրումներ գրավելու ք. Սպիտակ և տարածաշրջան:

Թաղամասում վարպետները կզբաղվեն խեցեգործությամբ, փայտագործությամբ, քարագործությամբ, գորգագործությամբ, մետաղագործությամբ, ավանդական խոհանոցով, հյուրանոցային սպասարկման և դերձակի արհեստներով:

Ծրագրի իրականացման համար ուսանելի կլինի Ֆրանսիայի արհեստների պալատի փորձը, որի հետ շուրջ 3 տարի է Սպիտակ քաղաքը համագործակցում է և արդեն պայմանավորվածություն կա Արհեստավորների դպրոց հիմնելու: Ստեղծելով տեղացի երիտասարդների խմբեր՝ այդ դպրոցում Ֆրանսիայի և տեղի վարպետների մասնակցությամբ

կպատրաստվեն խեցեգործներ, քարագործներ, գորգագործներ, դարբիններ, փայտագործներ, խոհարարներ, դերձակներ, հյուրանոցային սպասարկման գործի վարպետներ:

Ծրագրի հաջողությամբ իրականացումն ապահովելու համար Ֆրանսիայի մոդելով Սպիտակում հիմնվել է նաև <<Արհեստների պալատ>> ՀԿ:

*Երկրաշարժի հետևանքով անհատական բնակելի տուն կորցրած Սպիտակ քաղաքի բնակիչներին բնակարանով ապահովելու ծրագրի մասին*

1988թ դեկտեմբերի 7-ի երկրաշարժի հետևանքով հիմնովին ավերվել է նաև Սպիտակ քաղաքի անհատական բնակելի ֆոնդը: 2006թ. դրությամբ Սպիտակ քաղաքում հաշվառվել է շուրջ 560 անհատական բնակելի տուն կորցրած անօթևան ընտանիքներ: Այս ընտանիքները իրենց կորցրած անհատական բնակելի տների փոխարեն դրամական փոխհատուցում են ստացել ԽՍՀՄ ռուբլով, նրանք այդ գումարները տարբեր պատճառներով չեն օգտագործել, այն մնացել է խնայբանկում, արժեզրկվել: Նմանատիպ կարգավիճակում գտնվող գյուղական բնակչության բնակապահովման խնդիրը վերջին տարիներին լուծում ստացավ պետական աջակցությամբ, նույնատիպ խնդիր առաջացնելով նաև Սպիտակ քաղաքի բնակչության համար:

Սպիտակ քաղաքի անհատական բնակելի տուն կորցրած բնակիչներին պետական աջակցությամբ բնակարանով ապահովելու ծրագիր իրականացնելու նպատակով անհրաժեշտություն է կառավորության որոշմամբ ծրագրի շահառուների ընտրության չափորոշիչների սահմանումը, որից հետո անհրաժեշտ կլինի այդ չափորոշիչներին համապատասխան, ուսումնասիրությունների հիման վրա շահառուների ընտրությունը և հերթացուցակի կազմելը: Այս ուսումնասիրության արդյունքում բնականաբար փոփոխություն կկրի Սպիտակ քաղաքում նախկինում հաշվառման տվյալները, հիմնականում հնարավոր է վերը նշված թվի նվազում՝ պայմանավորված ընտանիքների մի մասի, անցած տարիների ընթացքում տարբեր ճանապարհներով անօթևանի կարգավիճակից դուրս գալու, կամ մշտական բնակության և հաշվառման վայրը փոխելու հետ :

Ծրագրի իրականացումը հնարավոր է շահառուների գնահատված վերջնական ցուցակն ունենալուց հետո, առաջնորդվելով հերթացուցակում ընդգրկվելու հերթականությամբ. աստիճանաբար, տարեկան 50-60 բնակարանի կառուցմամբ:

## *6. ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՈԼՈՐՏ*

### *Սպիտակ քաղաքի ջրամատակարարում և ջրահեռացում*

### *Իրավիճակի գնահատում*

Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը կառավարվում է <<ՀՋԿ>> ՓԲԸ-ի կողմից:

Ազգաբնակչությանը խմելու ջրով ապահովելու նպատակով Սպիտակ քաղաքը խմելու ջուր է ստանում 4 համակարգով.

1. Չախկալի կապտաժներից (18 հատ) Չախկալի-Սպիտակ ջրատարով, որի երկարությունը L=33.8 կմ տրամագիծ d=219-530մմ խողովակով, նյութը պողպատից է, արտադրողականությունը Q=20-50լ/վկ
2. Շիրակամուտի ինքնաբուխ խորքային հորերից, Շիրակամուտ-Սպիտակ ջրատարով, որի երկարությունը L=14.5 կմ, տրամագիծը d=530մմ, նյութը պողպատից է, արտադրողականությունը Q=25-35լ/վկ
3. Ջրաշենի խորքային հորերից, Ջրաշեն-Սպիտակ ջրատարով, որի երկարությունը L=6.5 կմ, տրամագիծը d=319մմ խողովակով, նյութը թուջ, արտադրողականությունը Q=30-35լ/վկ
4. Ղազանչի-Սպիտակ ջրատարով, որի երկարությունը L=5.3 կմ, տրամագիծը d=125մմ, նյութը պողպատ, արտադրողականությունը Q=2-4լ/վկ

Համայնքի ջրամատակարարման համակարգի գործող ՕԿՋ-ն են Չախկալի-Սպիտակ ջրատարի ՕԿՋ 2X2000մ³
Ջրաշեն-Սպիտակ ջրատարի ՕԿՋ 1X1000մ³, որոնց ընդհանուր ծավալը կազմում է 5000մ³:

Ներկայումս քաղաք մուտք գործող ջրատարների ջրերի վարակազերծումը կատարվում է առանձին կառուցված քլորակայաններում:

### *Ջրահեռացում*

Սպիտակ քաղաքի տարածքի կոյուղագիծը կառուցված կոյուղու կոլեկտորների միջոցով, հեռացվում է մինչև Սայաթ-Նովա փողոցի վերջնամասը, որտեղ առանց մաքրման թափվում են <<Փամբակ>> գետի մեջ, կոյուղու մաքրման կայան չլինելու պատճառով:

### *Հիմնախնդիրներ և նախատեսվող ծրագրային միջոցառումներ*

- Չախկալի-Սպիտակ ջրատարի գլխամասում փլված մի քանի կապտաժների փոխարեն անհրաժեշտ է կառուցել նոր կապտաժներ
- Շիրակամուտ-Սպիտակ ջրատարի գլխամասում մաքրել ինքնաբուխ խորքային հորերը ջրաքանակ ավելացնելու նպատակով
- Ջրաշեն-Սպիտակ ջրատարի գլխամասում մաքրել ինքնաբուխ խորքային հորերը
- Ղազանչի-Սպիտակ ջրատարի գլխամասում կառուցել քլորակայանի շենք
- Կապիտալ վերանորգման աշխատանքներ կատարել ներհամայնքային ջրագծերի և կոյուղագծերի որոշակի հատվածներում, որտեղ կորուստները և խցանումները մեծ քանակություն են կազմում:

*Էներգամատակարարում*

Սպիտակ համայնքի էներգահամակարգը կառավարվում է «Հայաստանի էլ. ցանցեր» ընկերության կողմից: Գոյություն ունեցող ենթակայանների տրանսֆորմատորների ընդհանուր հզորությունը $2^x25$ ՄՎտ է:

Հանրապետության էլեկտրահամակարգի հետ կապն իրականացվում է 110կվ միաշղթա բարձր լարման <<Արջուտ -1 և 2>> <<Սպիտակ-Ապարան>> բարձրավոլտ գծերով, որոնք անցնում են քաղաքի հեռանկարային սահմանով. Սպիտակ 110/35/10 կվ ենթակայանը սնող 110կվ բարձրավոլտ գծերի համար նախատեսվում է պաշտպանիչ գոտի՝ նորմատիվային պահանջներին համապատասխան: Քաղաքի բնակելի տների, արտադրական ձեռնարկութիունների արտաքին լուսավորության պահանջները բավարարվում են վերը նշված գլխավոր իջեցնող ենթակայաններից: Գործող 6-10 կվ լարման 1 հատ բախշիչ կայանի և 6-10/0.4 կվ լարման 48 հատ իջեցնող ցանցային միատրանսֆորմատորային ենթակայանները /կ.տ.ե/ քաղաքի բնակչության, հասարակական և կենսապահովման օբյեկտների էլեկտրամատակարարումը վերականգնելու համար տեղադրվել են երկրաշարժից հետո ավերված ենթակայանների փոխարեն: Քաղաքի 6-10 կվ լարման մալուխային գծերի երկարությունը 18 կմ է, օդայինը՝ 35 կմ:

Էլեկտրամատակարարման բնակիչ-բաժանորդների թիվը 5184 է, փաստացի մատակարարվում է 3794 բաժանորդի: Հանրային հատվածում 243 բաժանորդ կա:

Սպիտակ համայնքի գազամատակարարումը իրականացվում է «Հայ-Ռուս Գազարդ» ընկերության կողմից «Սպիտակ» և «ԳԲԿ» ավտոմատ գազաբաշխիչ կայաններից, որոնց ընդհանուր հզորությունը 7600 ն.մ ժամ է. սնումն իրականացվում է Կրասնի մոստ-Վանաձոր-Գյումրի-Արմավիր 325մմ տրամագծով բարձր ճնշման գազատարից: 2013թ. հունվարի 1-ի դրությամբ Սպիտակում գազաֆիկացված է ընդամենը 3624 բնակարաններ և առանձնատներ:

*Հիմնախնդիրներ և նախատեսվող ծրագրային միջոցառումներ*

- Գր. Լուսավորիչ թաղամասի մասնավոր հատվածի գազաֆիկացում:

*Արտաքին լուսավորություն*

*Իրավիճակի գնահատում*

2012թ. հունվարի 1-ի դրությամբ Սպիտակում լուսավորվող փողոցների թիվ կազմել է 21: 532 հենասյուների վրա տեղադրված են 662 լուսատուներ:

*Հիմնախնդիրներ և նախատեսվող ծրագրային միջոցառումներ*

- Արտաքին լուսավորության ցանցի վերանորոգում և հիմնանորոգում:
- Արտաքին լուսավորության ցանցի տեխնիկական վերազինում, էներգոխնայողական լուսատուների և այլ ժամանակակից մեթոդների ներդրում:

*Աղբահանություն և սանիտարական մաքրում*

*Իրավիճակի գնահատում*

Համայնքի սանիտարական մաքրման ենթակա փողոցների, հրապարակների կամուրջների, մայթերի և այլ կառույցների ընդհանուր մակերեսը կազմում է 60.330 քմ:

Համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներն իրականացվում են <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով սահմանված մրցույթում հաղթող ճանաչված ընկերության կողմից:

Աղբահանությունը կատարվում է շուրջ 166 բազմաբնակարան շենքերից և շուրջ 1571 մասնավոր տնտեսություններից: Սպիտակ համայնքի փողոցների, մայթերի, հրապարակների, եզրաքարերի երկարությամբ սանիտարական մաքրման աշխատանքներն իրականացվում է հիմնականում հավաքարարների՝ ձեռքով ավլելու միջոցով:

Սպիտակի համայնքի վարչական տարածքում տեղադրված է թվով 150 փոքր և 331 մեծ աղբաման, որին 2013-2016թթ. ընթացքում պետք է ավելացվի ևս 100 հատ: 2013-2016թթ. ոչ պիտանի 100 աղբարկղները կփոխարինվեն նորերով:

*Հիմնախնդիրներ և նախատեսվող ծրագրային միջոցառումներ*

- Շահագործվող հատուկ նշանակության մեքենա մեխանիզմների ֆիզիկական մաշվածություն և անբավարար քանակ:
- Աղբահանության վարձավճարների թերի համակարգ:
- Համայնքի չնախատեսված վայրերում աղբանետումներ:
- Աղբավայրի օրինականացում:

## *7. ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ*
*01.01.2013թ. դրությամբ*

| | | |
|---|---|---|
| 1 | Բազմաբնակարանային շենքեր | 166 |
| 2 | Վթարային շենքեր | 170 |
| 3 | Առանձնատներ | 971 |
| 4 | Անօթևան ընտանիքների թիվը | 867 |
| 4.1 | Վագոն տնակներ | 527 |
| 4.2 | Ժամանակավոր կացարաններ | 340 |

## *8. ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ*

Համայնքի վարչական տարածքը – 6066.75, այդ թվում

- բնակարանային ֆոնդ –378.81
- արտադրական նշանակության հողեր – 217.18
- գյուղատնտեսական նշանակության հողեր - 4114.13

## *9. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ*

Գյուղատնտեսության ճյուղերը

- դաշտավարություն
- անասնապահություն
- այգեգործություն
- այլ

## *10. ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ*

Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը և մակերեսը, դրանց վիճակը

- Շահումյան-14200քմ, 1180մ, որից 220մ հիմնանորոգման ենթակա, 400մ ասֆալտապատ, 560մ նորոգման ենթակա
- Ոփյան – 5800քմ, 720մ, որից 140մ ասֆալտապատ, 580մ հիմնանորոգման ենթակա
- Չարենց – 11500քմ, 1280մ հիմնանորոգման ենթակա
- Խնկոյան – 4800քմ, 600մ հիմնանորոգման ենթակա
- Թորոսյան – 5400քմ, 540մ նորոգման ենթակա
- Առափնյա - 7500քմ, 1000մ հիմնանորոգման ենթակա
- Պանրագործներ–1420քմ, 950 մ, որից 200մ ասֆալտապատ, 750մ հիմնանորոգման ենթակա
- Քըրք Քըրքորյան- 13440քմ, 1680մ հիմնանորոգման ենթակա
- Թումանյան- 19080քմ, 2120մ նորոգման ենթակա

- Ն. Աճեմյան – 6400քմ, 640մ նորոգման ենթակա
- Սայաթ-Նովա – 6200քմ, 690մ, որից 140մ ասֆալտապատ, 550մ հիմնանորոգման ենթակա
- Շիրակի խճուղի – 2200քմ, 2450մ վերանորոգման ենթակա
- Այգեստան թաղ.- 14800քմ, 1850մ հիմնանորոգման ենթակա
- Էստոնական թաղ.-9500քմ, 1360մ հիմնանորոգման ենթակա
- Շվեյցարական թաղ.-14700քմ, 2100մ, որից 770մ նորոգման ենթակա, 1330մ հիմնանորոգման ենթակա
- Իտալական թաղ.-15000քմ, 2500մ, որից 2000մ նորոգման ենթակա, 500մ հիմնանորոգման ենթակա
- Ուզբեկական թաղ. – 43300քմ, 6190մ, որից 350մ նորոգման ենթակա, 4565մ հիմնանորոգման ենթակա, 1275մ երկաթբետոնյա
- Գր. Լուսավորիչ թաղ.- 12250քմ, 1750մ հիմնանորոգման ենթակա

## *11.. ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ*

Համայնքի տարածքում առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի օբյեկտների թիվը, այդ թվում՝

- առևտրի փոքր, միջին և խոշոր օբյեկտներ – 177
- տոնավաճառներ – 1
- բենզինի լցակայաններ -5
- գազի լիցքավորման կայաններ -5
- հանրային սննդի օբյեկտներ – 4
- խաղատներ, զվարճանքի, շահումներով խաղերի օբյեկտներ – 0
- բաղնիքներ (սաունաներ)- 0
- այլ

## *12.ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐ, ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐ, ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ, ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ*

Համայքն ունի՝

- զբոսայգի- 1
- խաղահրապարակ – 14
- հանգստի գոտի – 1
- մերձակա անտառային գոտի – 1
- բակային տարածք - 4

## *13. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ*

Քաղաքում դեռևս կան անօթևաններ, վագոն-տնակներում բնակվողներ, հաշմանդամներ, ծերեր, սոցիալապես խիստ անապահով խավեր, որոնց կարիքները հնարավորության սահմաններում քաղաքապետարանը հոգում է, սակայն դա բավարար չէ նրանց խնդիրները վերջնականապես լուծելու համար:

*Հիմնախնդիրներ և նախատեսվող ծրագրային միջոցառումներ*

- Կապերի հաստատում տեղական և արտասահմանյան բարեգործական հասարակական և դոնոր կազմակերպությունների հետ և նրանց ներգրավումը վերոնշյալ խավերի խնդիրների լուծման հարցերում:
- Համայնքի ցերեկային կենտրոնի (ծերերի բարեգործական ճաշարան) շենքի վերանորոգում, ծառայությունների ընդլայնում:
- Համայնքում սոցիալական աշխատողների ինստիտուտի ներդրում:

## 14. ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ

## ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՆԽ ԱՏԵՍՈՒՄ

Համայնքի 2011-2012թթ. բյուջեների մուտքերի ցուցանիշները և 2013-2016թթ բյուջեների մուտքերի կանխատեսումը

հազար դրամ

| Հ/հ | Մուտքերի անվանումը | 2011թ. նախատ. | 2011թ. փաստ. | 2012թ. նախատ. | 2012թ. փաստ. | 2013թ. նախատ. | 2014թ. կանխ. | 2015թ. կանխ. | 2016թ. կանխ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| | ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ | 280713.3 | 262318.6 | 270257.2 | 266317.25 | 287137.2 | 302005.2 | 326825.2 | 351025.2 |
| I. | ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 243892.3 | 244587.2 | 253454.6 | 258662.66 | 283137.2 | 295005.2 | 318825.2 | 343025.2 |
| 1. | ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ | 38650.0 | 38104.8 | 36624.8 | 40190.95 | 35388.0 | 37150.0 | 39800.0 | 41500.0 |
| 1.1 | Գույքային հարկեր անշարժ գույքից | 7350.0 | 8454.75 | 5970.0 | 7374.43 | 6018.0 | 6050.0 | 6200.0 | 6400.0 |
| | Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար | 4100.0 | 4323.7 | 2670.0 | 2869.18 | 2670.0 | 2700.0 | 2800.0 | 2900.0 |
| | հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | 3250 | 4131.39 | 3300.0 | 4505.26 | 3348.0 | 3350.0 | 3400.0 | 3500.0 |
| 1.2 | Գույքային հարկեր այլ գույքից | 19500.0 | 18268.5 | 18686.8 | 21050.34 | 19600.0 | 21000.0 | 22.000.0 | 23000.0 |
| | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | 19500.0 | 18268.5 | 18686.8 | 21050.4 | 19600.0 | 21000.0 | 22000.0 | 23000.0 |
| 1.3 | Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման,թույլտվության վճարներ | 4300.0 | 3073.0 | 3768.0 | 3628.88 | 3770.0 | 4100.0 | 5100.0 | 5300.0 |
| | Տեղական տուրքեր | 4300.0 | 3073.0 | 3768.0 | 3628.88 | 3770.0 | 4100.0 | 5100.0 | 5300.0 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1.4 | Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ | 7300.0 | 7689.35 | 7700.0 | 7919.6 | 5500.0 | 5500.0 | 6000.0 | 6300.0 |
| | Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր | 7300.0 | 7689.35 | 7700.0 | 7919.6 | 5500.0 | 5500.0 | 6000.0 | 6300.0 |
| 1.5 | Այլ հարկային եկամուտներ | 200.0 | 619.22 | 500.0 | 217.7 | 500.0 | 500.0 | 500.0 | 500.0 |
| | Օրենքով պետական բյուջե ամրագրվող հարկերից և այլ պարտադիր վճարներից մասհանումներ համայնքների բյուջեներ | 200.0 | 619.22 | 500.0 | 217.7 | 500.0 | 500.0 | 500.0 | 500.0 |
| | Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 2. | ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ | 184861.0 | 184861.3 | 187819.5 | 187819.4 | 209384.0 | 219500.0 | 239500.0 | 261500.0 |
| 2.1 | Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 2.2 | Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 2.3 | Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ | 184861.0 | 184861.3 | 187819.5 | 187819.4 | 209384.0 | 219500.0 | 239500.0 | 261500.0 |
| ա) | Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման | 181441.2 | 181441.7 | 184904.9 | 184904.9 | 206469.4 | 216585.4 | 236585.4 | 258585.4 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | | | | | | | | |
| բ) | Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ | 505.2 | 505.0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| գ) | Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | 2914.6 | 2914.6 | 2914.6 | 2914.5 | 2914.6 | 2914.6 | 2914.6 | 2914.6 |
| դ) | Այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 2.4 | Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| ա) | Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| բ) | Այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 3. | ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ* | 20381.3 | 21621.1 | 29010.3 | 30652.3 | 38365.2 | 38355.2 | 39525.2 | 40025.2 |
| 3.1 | Տոկոսներ | | | | | | | | |
| 3.2 | Շահաբաժիններ | | | | | | | | |
| 3.3 | Գույքի վարձակալությունից եկամուտներ | 6000.0 | 5994.3 | 6885.1 | 6723.63 | 5690.0 | 5730.0 | 6000.0 | 6000.0 |
| | Համայնքի սեփականություն | 3200.0 | 2952.3 | 3225.1 | 3077.63 | 3230.0 | 3230.0 | 3500.0 | 3500.0 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | համարվող հողերի վարձավճարներ | | | | | | | | |
| | Համայնքիվ տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| | Այլ գույքի վարձակալությունից մուտքեր | 2800.0 | 3042.0 | 3660.0 | 3646.0 | 2460.0 | 2500 | 2500.0 | 2500.0 |
| 3.4 | Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից | 3425.2 | 3425.2 | 2525.2 | 2525.2 | 2525.2 | 2525.2 | 2525.2 | 2525.2 |
| | Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ | 3425.2 | 3425.2 | 2525.2 | 2525.2 | 2525.2 | 2525.2 | 2525.2 | 2525.2 |
| 3.5 | Վարչական գանձումներ | 10656.1 | 11380.7 | 19300.0 | 21367.0 | 28850.0 | 29000.0 | 30000.0 | 30500.0 |
| | Տեղական վճարներ | 10556.1 | 11364.3 | 19200.0 | 21330.5 | 28750.0 | 28900.0 | 30000.0 | 30500.0 |
| | Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ | 100.0 | 16.5 | 100.0 | 36.5 | 100.0 | 100.0 | 0 | 0 |
| 3.6 | Մուտքեր տույժերից, տուգանքներից | 300.0 | 820.9 | 300.0 | 36.48 | 1300.0 | 1100.0 | 1000.0 | 1000.0 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող գծով տույժերից | | | | | | | | |
| 3.7 | Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ | | | | | | | | |
| 3.8 | Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ | | | | | | | | |
| 3.9 | Այլ եկամուտներ* | | | | | | | | |
| | Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր | | | | | | | | |
| | Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր | | | | | | | | |
| | Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ | | | | | | | | |
| II | ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4) | 36821.0 | 17731.3 | 16802.6 | 7654.54 | 4000.0 | 7000.0 | 8000.0 | 8000.0 |
| 1. | Հիմնական միջոցների իրացումից մուտքեր | | | | | | | | |
| | Անշարժ գույքի իրացումից մուտքեր | | | | | | | | |
| | Շարժական գույքի իրացումից մուտքեր | | | | | | | | |
| | Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր | | | | | | | | |
| 2. | Պաշարների իրացումից | | | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | մուտքեր | | | | | | | | |
| 3. | Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր | | | | | | | | |
| 4. | Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր | 36821.0 | 17731.35 | 16802.6 | 7654.54 | 4000.0 | 7000.0 | 8000.0 | 8000.0 |
| | Հողի իրացումից մուտքեր | 36821.0 | 17481.35 | 16802.6 | 7654.54 | 4000.0 | 7000.0 | 8000.0 | 8000.0 |
| | Ոչ նյութական չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր | 0 | 250.0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| III | ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ԴԵՖԻՑԻՏԻ (ՊԱԿԱՍՈՒՐԴԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (Ա+Բ) | | | | | | | | |
| Ա. | ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (1+2) | | | | | | | | |
| 1. | ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ | | | | | | | | |
| 1.1 | Արժեթղթեր | | | | | | | | |
| | - թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր | | | | | | | | |
| | - հիմնական գումարի մարում | | | | | | | | |
| 1.2 | Վարկեր | | | | | | | | |
| | - վարկերի ստացում | | | | | | | | |
| | - ստացված վարկերի հիմնական գումարի մարում | | | | | | | | |
| 1.3 | Փոխատվություններ | | | | | | | | |
| | - բյուջետային փոխատվությունների ստացում | | | | | | | | |
| | - ստացված փոխատվությունների գումարի մարում | | | | | | | | |
| 2. | ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ | | | | | | | | |
| 2.1 | Բաժնետոմսեր և կապիտալում այլ | | | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | մասնակցություն | | | | | | | | |
| 2.2 | Փոխատվություններ | | | | | | | | |
| 2.3 | Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը | | | | | | | | |
| 2.4 | Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս | | | | | | | | |
| 2.5 | Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մաս տրամադրված միջոցների վերադարձ ֆոնդային մաս | | | | | | | | |
| 2.6 | Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում | | | | | | | | |
| | որից՝ ծախսերի ֆինանսավորմանը չուղղված համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարը | | | | | | | | |

վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացվող գումարը չի մտնում բյուջետային ընդհանուր եկամուտների մեջ

*Հիմնախնդիրը և նախատեսվող ծրագրային միջոցառումներ*

- Միջոցներ ձեռնարկել համայնքի բյուջեի միջոցների ավելացման ուղղությամբ, շարունակել եկամտատեսակների բազաների ճշտումը:
- Աշխատանքներ տանել տեղական հարկեր, տուրքեր, վարձավճարներ վճարողների հետ՝ օրինականության սահմաններում ու ժամկետում դրանք վճարելու համար:
- Անհրաժեշտ հսկողություն իրականացնել առևտրի, սպասարկման և հասարակական սննդի օբյեկտներում առևտրի կանոնների պահպանման ուղղությամբ, պաշտպանել սպառողների շահերը:

## ՈԼՈՐՏԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

| Հ/հ | Ծրագրի անվանումը | Ծրագրի արժեքը(հազ.. դրամ) | Ծրագրի կատարումն ըստ տարիների | | | | Ֆինանսավորման աղբյուրները | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 2013 | 2014 | 2015 | 2016 | համայնքի բյուջե | Դոնոր կազմ.-ներ | Պետբյուջե , այլ |
| 1 | ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ | | | | | | | | |
| 2 | Քաղաքաշինական փաստաթղթերի , գլխավոր հատակագծի կազմում, հաստատում | 20.000 | | | | | | | |
| 3 | Հացեավորման անցկացում | 16.000 | | | | 16.000 | | 16.000 | |
| 4 | Բնակարանաշինություն/սեփ. առանձնատներ կորցրած քաղաքացիների. վարպետների համար բնակարանների կառուցում, սոցիալական բնակարաններ | 200.000 | 20.000 | 60.0000 | 60.000 | 60.000 | | 60.000 | 140.000 |
| 5 | Քաղաքպետարանի վարչական շենքի վերանորոգում | 5.000 | | 5.000 | | | 5.000 | | |
| 6 | Երաժշտական դպրոցի շենքը համայնքային սեփականություն ճանաչելու, վերանորոգման աշխատանքների իրականացում | 2.000 | | 2.000 | | | 1.000 | 1.000 | |
| 7 | Գեղարվեստի դպրոցի շենքի վերանորոգում | 2.000 | | 2.000 | | | 1.000 | 1.000 | |
| 8 | Մարզադպրոցի շենքի նկատմամբ համայնքի սեփականությունը ճանաչելու, վերանորոգման աշխատանքների իրականացում | 3.000 | | | 3.000 | | 3.000 | | |
| 9 | Փողոցների հիմնանորոգում | 20.000 | | | | 20.000 | | | 20.000 |
| 10 | Փողոցների վերանորոգում | 30.000 | 30.000 | | | | | | 30.000 |
| 11 | Լուսակիրների տեղադրում | | | 8.000 | | | | | 8.000 |
| 12 | Պատմամշակութային հուշարձան հանդիսացող ,Քրրք-Քրրքորյան թաղամաս | 30.000 | | | | 30.000 | | 30.000 | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | տանող, միաթռիչք, 19-րդ դարի կամրջի հիմնանորոգում | | | | | | | | |
| 13 | Քաղաքային գերեզմանատան տարածքի բարեկարգում, լուսավորության անցկացում | 80.000 | | | | | | 80.000 | |
| 14 | Փողոցային լուսավորություն | 12.000 | | | | 12.000 | | 12.000 | |
| 15 | Ըմբշամարտի դահլիճի կառուցում | 100.000 | | 100.000 | | | | | 100.000 |
| 16 | Գրիգոր Լուսավորիչ թաղամասի գազաֆիկացում | 15.000 | 15.000 | | | | 1.500 | 13.500 | |
| 17 | Մշակույթի տան շենքի գազաֆիկացում, ջեռուցման համակարգի տեղադրում | 5.000 | | 5.000 | | | 5.000 | | |
| 18 | Բարեգործական ճաշարանի հիմնանորոգում | 12.000 | | 12.000 | | | | 12.000 | |
| 19 | Կանաչապատում, բարեկարգում | 5.000 | 1.000 | 1.000 | 1.000 | 1.000 | | 4.000 | 1.000 |
| 20 | Կոյուղագծերի, խմելու ջրագծերի վերանորոգում, հիմանորոգում, նորերի կառուցում | 500.000 | 500.000 | | | | | 500.000 | |
| 21 | Սոցիալական ձեռնարկությունների հիմնում | 100.000 | | 100.000 | | | | 100.000 | |
| 22 | Էներգախնայողությունների համակարգի ներդրում | 10.000 | | | | 10.000 | | 10.000 | |
| 23 | Աղբարկղների ձեռք բերում | 5.000 | 1.000 | 3.000 | 1.000 | 1.000 | | 6.000 | |
| 24 | Աղբավայրի օրինականացում | 12.000 | 1.000 | 500 | 500 | 10.000 | | 12.000 | |
| 25 | Գույքի ձեռք բերում | 5.000 | 2.000 | 1.000 | 1.000 | 1.000 | | 5.000 | |
| 26 | Համայնքի վերաբերյալ տեղեկատվական նյութերի տպագրություն | 1.300 | 500 | 300 | 500 | | | 1.300 | |
| 27 | Նախագծային աշխատանքներ | 6.000 | 1.500 | 1.000 | 1.500 | 2.000 | | 6.000 | |